

ւորութեան կապուած է: Դիտուած է նոյն պէս. բազմաթիւ թոշուններու համար մառախլապատ ողբ շատ աւելի մահաբեր է ու ճակատագրական քան պայծառ և ցուրտ ողբ, որովհետեւ մշուշ եղած ժամանակ այդ կարգի թոշունները կերի չեն երթար, հետեւաբար քաղցած կը մեռնին:

Իրենց այսօրինակ ապրելակերպը մինչև անտեղութեան կը հասնի: Լարիգ քնագէտը տեսած է վանդակի մէջ եկրանիկներ, որ մառախլապատ օրերուն՝ բառին զուտ իմաստով անթոյններն էին: Կրկին եղբ, անոր հակառակ կը սկսին երգել ու զուարթանալ՝ երբ իրենց բնակավայրը արուեստական կերպով առատօրէն լուսաւորուի:

Նոյն եզրակացութեան յանգած են ամերիկացի հաւարդներու ըրած փորձն. րուն արդիւնքները. ասոնց առատ հաւկիթ ունեցած են պայծառօրէն լուսաւորելով

հաւնոցները: Պատճառը, որովհետեւ հաւերը այս պայմաններու մէջ աւելի կ'ուտեն: Միւս կողմանէ արեւադարձային երկիրները բնակող թոշունները վատ ձուարեններ են. անոնց էգերը որոշեալ շրջանի մը մէջ մէկ երկու հաւկիթ կ'ածեն, մինչդեռ մեր երկիրներն ապրող նոյն թոշուններու մերձաւոր տեսակները նոյնքան ժամանակամիջոցի մէջ չորսէն վեց և նոյն իսկ աւելի կ'ածեն: Այս տարբերութիւնը կը կախուի վերև յիշած իրողութենէն, այսինքն թէ տաք կլիմաներու մէջ կեր փնտռելու ժամերը ամենատարաւ աւելի քիչ են, միջօրէից սաստիկ ջերմութեան պատճառաւ, որով հակառակ կերի առատութեան և ուռնացեալ բուսականութեան՝ անդառուութիւնը աւելի նուազ է, ինչպէս նաև ձուարեութեան կարողութիւնը:

Ա. Բ. Ս. ՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՆ

ՀԱՅ ՆՈՐԱԳՈՅՆ ԿՕՄՊՕԶԻՏՈՐՆԵՐ

(20-րդ դար)

Ե Յ Ե Ե Ե Ե

(Ետումնաւորութիւն տես Բազմավէպ, 1925 էջ 378)

VII. Ռումնոս Մերիքեանի դերը

Հայ երաժշտական կուլտուրական արժէքները ստեղծողների մէջ Ռոմ. Մե. լիքեանն անպայման ունի իր առանձնայատուկ տեղը:

Տասնըփոք տարիներից ի վեր նա ստեղծագործում է և կերտում: Այդ տասնըփոք երկարատե տարիների ընթացքում նա հայ երաժշտութեան զարգացման համար անգնահատելի դեր է կատարել: Այսպէս՝ նա ամենաառաջին երաժիշտն է, որ պայքարում է երաժշտական քարացած ուսուցիչի դէմ՝ և հարթում նոր ուղիներ: Ազգային շինծու երգերին և ժողովրդական անմշակ լէլէներին հակադրում է նա գեղարուեստական երաժշտութիւնը: Դրանով հայ երաժշտութեան մէջ մտցնում է նա թարմութիւն, գեղարուեստականութիւն:

Բայց կայ մի ուրիշ հիմնական գիծ, որ առանձնապէս շեշտում է նրա երաժշտութեան մէջ: Եթէ Մական Եկմալեանն առաջինն է, որ բազմաձայն ներդաշնակութիւն է մտցնում հայոց հոգեւոր եղանակների մէջ, եթէ Կարա-Մուրզան

առաջին անգամ լինելով քառաձայն երգեցողութիւնն է թնդացնում հայոց եկեղեցիներում և ժողովրդական երգը հնչեցնում, եթէ կոմիտասը ժողովրդական—գեղական երգերն է ձայնագրում ու մշակում խմբական երգեցողութեան, դաշնամուրի և մենեդջների համար, ապա Ռոմ. Մելիքեանն ամենաառաջին երաժիշտն է, որ բանասիրական—ազգագրական երաժշտութեան հակադրում է բացառապէս սոնատական, ինքնուրոյն ցեղարեւոտական հայ երաժշտութիւնը։ Իրրե լիրիք նա դրսևորում մի առանձնայատուկ աշխարհ։ Այնտեղ զոյները, պատկերները, յուշերն ու անուշիները բազմերանգ են, թափանցիկ, պարզ և միևնոյն ժամադրակ տաք ու փրմագին... Գուց ապրում էք այդ աշխարհում, համակում նրա երազներով, յոյզերով, նրա հոգու կրակով։

Ռոմ. Մելիքեանի առանձնայատուկութիւններից մէկն էլ կայանում է նրանում, որ նա առանձին ուշադրութիւն է դարձնում հայ ժողովրդական հին երգերի հաւաքման վրայ և այդ երգերի հիւսածքներից ստեղծում է ժամանակակից հոգեբանութեան համապատասխան նոր և բարդ երգեր։ Նոյն ուղղութեամբ են գործել Գլինկան՝ Ռուսաստանում, Վեբերը՝ Գերմանիայում և Գրիգը՝ Նորվեգիայում։

Ռոմ. Մելիքեանն մինչև օրս էլ շարունակում է իր երաժշտական գործը։ Տարիների ընթացքում նա կարող է շատ նոր արժէքներ աւելացնել ներկայի վերայ, այդ պատճառով էլ ղեմաւարանում ենք նրա դերի մասին վերջնական խօսք ասելու։

Սակայն մի հանգամանք որոշապէս կարող ենք ընդգծել, որ վերջին տասնամակում հայ երաժշտական—հասարակական շարժման և գեղարեւոտական զարգացման խնդրում Ռոմ. Մելիքեանն եղել է արժէքատուր դէմք։

Գ. — ՍՊԻՐԻԴՈՆ ՄԵԼԻՔԵԱՆ

I. Կեանքը

Հայ նորագոյն տեսական երաժշտութեան տաղանդաւոր կոմպոզիտորներից մէկն է Սպ. Մելիքեանը։ Մնւել է նա 1880 թ. Դեկտ. 1 ին վաղարշապատում (Էջմիածնում), ուր անցնում է և նրա մանկութեան շրջանը։ Ընտանեկան գուրգուրանքից զրկւում է նա ամենափոքր հասակից. դեռ 8 տարեկան մեռնում է նրա մայրը, իսկ 10 տարեկան՝ հայրը, այնպիսով նա մնում է բառի իսկական առուսով որբ։ Այնուհետե երկու տարի խնամում է մօրեղբայրների հսկողութեամբ և միաժամանակ յաճախում վաղարշապատի ծխական դպրոցը։ 1893 թիւն, 13 տարեկան հասակում, իրրե որբ ընդունւում է Էջմիածնի «Գէորգեան Ճեմարանը», ուր ուսանում է մինչև 1910 թականը։ Դա կարապետ Կոստանեանի և մագիստրոս—աստափաճարան Կարապետ Տէր Մկրտչեանի տեսչութեան շրջանն է։ Այդ ժամանակափոխոցը Ճեմարանի պատմութեան ամենափայլուն շրջանը կարելի համարել, կոմիտաս վարդապետ, Մանուկ Աբեղեան, Սիրական Տիգրանեան, Յակոբ Մանանդեան, որոնք ռուսացական խմբի ամենալուաւոյն ոյժերն էին, Ճեմարանը դնում են իր կոչման բարձրութեան վրայ։ Այդ միջավայրում Սպիրիդոնն ստանում է քաղմեղակ ազդեցութիւններ, կրթական տեսանկէտից պատմա—փիլիսոփայական խորութիւն է ձեռք բերում, իսկ երաժշտութեան տեսանկէտից նրա վրայ իր խոր դրոշմը դնում է կոմիտասը, որ իրրե կազմակերպութեամբ երաժիշտ նոր էր վերագործել արտաքսմանից։ Ուղիղ երեք տարի նա երաժշտական մասնաւոր դասեր է տալիս Սպիրիդոնին։ Այդ պարապմունքների հետեանքով՝ նրա հին երա-

ժըշտական աշխարհայեացքը փոխում է եւրոպականի և նա պատրաստում իրրև երաժիշտ: Ճեմարանում Սպիրիդոնը մասնակցում է նաև կոմիտասի քառաձայն խմբին, ուր զարթնում է նրա մէջ ժողովրդական երգի սէրը:

1902 թւին Սպիրիդոնն ավարտում է Ճեմարանը, որից յետոյ նշանակւում է Ճեմարանի ուսուցիչ: Երկու տարի հոն պաշտօնավարում է նա և միաժամանակ կոմիտասի հակողութեամբ ղեկավարում Ճեմարանի երգեցիկ խումբը:

1904 թւին Ճեմարանի խորհուրդը «Ղոպխանանի» կտակով ուղարկում է նրա Բերլին, որպէս զի երաժշտութեան մէջ աւելի խորանայ: Այդ նոր աշխարհում նա կոմիտասի պրօֆէսորների Ռիքարդ Շմիդտի, Օսկար Ֆլայշէրի, Հ. Կրեչմարի և Զիգֆրիդ Օքսի մօտ կօնսէրատօրիական լիակատար ծրագրով չորս տարի շարունակ անցնում է երաժշտութեան թէօրիան և խորանում եւրոպական երաժշտութեան մէջ: Բերլինում յաճախում է նաև համալսարանի փիլիսոփայական ֆակուլտէտը և լսում զրական ու փիլիսոփայական առարկաներ: Մասնակցում է նաև «Ֆրիդրիխսենի» միութեան 500 հոգուց բաղկացած խմբին:

1908 թւի Սեպտեմբերին ավարտում է երաժշտական—ուսումնական դասընթացը և վերադառնում է Էյմիաժին: Նոյն ձմռան հրաւիրւում է Շուշոյ թեմական դպրոցն իրրև ուսուցիչ—խմբավար: Այդ միջավայրում նա առանձնապէս ուսումնասիրում է արևելեան երաժշտութեան «Թաա»ի գրականութիւնը: Այդտեղ էլ գրում է «Երաժշտութեան զարգացման խնդիրը մեզանում» քրօշիւը:

1909—1910 ուսումնական տարեշրջանին հրաւիրւում է նա Թիֆլիսի «Ներսէսեան թեմական դպրոցը», ուր պաշտօնավարում է անընդհատ տասներկու տարի:

1921 թւին իր ընտանիքով տեղափոխւում է նա Էյմիաժին և երկու տարի պաշտօնավարում է «Երկրորդ աստիճանի դպրոցում»: 1923 թւի աշնանը նա լուսժողովատի կողմից հրաւիրւում է Երևան՝ իրրև «Մանկավարժական ինստիտուտի» և «Երկրորդ աստիճանի դպրոցի» ուսուցիչ: Յաջորդ 1924 թւի Հոկտեմբեր 1—ից ստանձնում է Երևանի Կօնսէրատօրիական ուսուցչի և պետական համալսարանում խմբապետի պաշտօնը: Այդ ասպարիզում ծառայում է նա մինչև օրս:

II. Սպ. Մելիքեանի համերգային գործունէութիւնը

Սպ. Մելիքեանն իր երաժշտութեան գործունէութեան տասնամեակում կազմակերպել է մի շարք համերգներ և զարկ տալ ժողովրդի երաժշտական—գեղագիտական կրթութեան գործին: Ո՛ր քաղաքներում նա կազմակերպել է համերգներ, կուլտուրական ինչպիսի երևոյթներին է արձագանգել և ի՞նչ յաջողութիւններ է ունեցել, Այս հարցերին պատասխանելու համար գծենք այստեղ նրա համերգների և ցննադատութիւնների պատկերը:

1909 թւին, Շուշում, առիւթ է նա իր ամենաառաջին համերգը: Դա նրա ակմարային գեղարւեստական գործունէութեան սիմուլն է: Այնուհետև նրա համերգային կուլտուրական գործունէութեան զլխաւոր կեդրոնը դառնում է Թիֆլիսը: ուր պաշտօնավարում է նա անընդհատ տասն երկու տարի:

Ի՞նչ դեր է կատարում նա այդ տասնամեակում:

Ամենաառաջին հերթին Ներսէսեան դպրոցում կազմում է 60 հոգուց բաղկացած քառաձայն ուժեղ մի խումբ, որը Թիֆլիսում մշտ հայկական երաժշտական կուլտուրայի և գեղարւեստական երգեցողութեան արտայայտիչն ու ներկայացուցիչն է հանդիսանում: Այսպէս՝ 1920 Դեկտեմբեր 29—ին Թիֆլիսի ժողովարանում յօգուտ «Կովկասի հայոց դպրոցների ուսուցչի—ուսուցչուհիների Միութեան»

կազմակերպում է գրական—երաժշտական մի երեկոյթ, Կոլտուրական այդ երեկոյթին գործնական մասնակցութիւն է ցոյց տալիս իր խմբով Սպիրիդոնը:

1911 թ. փետրար 11-ին Թիֆլիսի Պետական ժողովրդական տան տօնուած է գիւղացիների ճորտական ազատագրութեան 50-ամեայ պատմական տօնը: Այդ առիթով ուսական, ուկրաինական, վրացական երգեցիկ խմբերի հետ հրապարակ է գալիս և Սպ. Մելիքեանի խումբը և մեծ ընդունելութիւն գտնում: Նոյն թիւ ամսան Սպիրիդոնն անցնում է Դիլիջան, կազմում է մի խումբ և տալիս մի համերգ, որն արժանանում է հասարակութեան զնահատութեանը:

(Շարայտրեյի)

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

Մ Ա Յ Ր Դ Ի Ի Ա Ն

ՄԻԻԹԱՐԵԱՆՑ ՎԵՆԵՏԿՈՅ. — Ի Ս. ՂԱԶԱՐ

(Շար. տես Բազմ. 1925, էջ 890)

ՃԼԴ.

Սարգիս Արքեպիսկոպոս Կապադովկեցոյ նամակներու շարքին մէջ կայ 1746 Յունուար 1 թուակիր թուղթ մը առ Միսիթար, սկիզբը հետեւեալ ոտանաւորով.

Ամաւենոյդ | Բարձրագիտակ | Սրբաստեղուն
 Բարաքապէս | Ամատացեալ Յար | Անշարժուն
 Համեղ պո[ղ]օթ | Առատացեալ | Բախշան սիրուն
 Յարասարթ | Բախաբերուն | Գծր կատարուն.
 Կրօնիւ մարուր | Ողղադաւան, և | Սրբասուն
 Ձիք քան զքեզ | Եռամեծար այր | Իմաստուն
 Ծառ որ կամիմ | Ես յետեցեալս | Սրտիւ բծուն
 Անհատ սիրով | Լիազունիւ ձօնել | զՈղջուն:

Փաւեմեցեալեան վերոյիշեալ նամակներն հրատարակած ատեն պէտք չէ տեսած այս վերջին թուղթն ի լոյս ընծայել, որովհետեւ Երնդեան և Նոր Տարւոյ ընդհաւորագիր մ'է ան, ինչպէս ինքն ալ բաւականացած է այս յիշատակութեամբ անցնել, զինչով լոկ ոտանաւորը: Սակայն, չենք գիտեր ինչո՞ւ, անոր երկու վերջին տողերը կը պակսին իր հրատարակութեան մէջ, ինչ որ սխալ հետեւանքի մը տարած է զինքը՝ երբ կ'ըսէ. « Առաջին երկու սիւններու զխազիրներն ընթացիկ՝ իսկ վերջին սիւնը վերէն վար կարդալով կ'ունենանք Արքայ Հայր կոչի Սարգսի՝ » . մենք ամբողջին հրատարակութեամբ կ'ունենանք այժմ որոշ իմաստ մը. « ԱՐԱՄ ՀԱՅՐ ԿՈՅԵՍԵԱՆ ՍԱՐԳՍԻՍ ... ՈՂՋՈՒՆ » (վերջին բառ երրորդ սիւն):

(Շարունակել) Հ. Լ. Լ.

Հ. ՂԵՐՈՒՄ ՏԱՅԵԱՆ

1.— Գաւեթ, Կենտրոն. Սարգ. Արքեպո. Սարգ. էջ 207.